ւորս և մեծամեծս քաղաքին կատարել զինդիրս Հայոց, մինչ 'ի գալուստ հրովարտակի նոցին, որ յուսայր լինել 'ի ճանապարհի. վարեսցին ասէ ըստ առաջին սովորութեան։ Յետ ընթեռնլոյ զայս գիր 'ի դատարանի՝ ուր էր և Աւետիս Թարգմանն, գրեաց Դատաւորն առ Թէոդորոս Պատրիարք, առնել զամենայն ինչ ըստ հրամանի Կուսակալին, եւ նա ետ դնել զպատկեր Լուսաւորչին 'ի վերայ դրան Գերեզմանին Քրիստոսի կանթեղաւն, և զայլս յիւրաքանչիւր տեղիս՝ յաւուր Ծաղկազարդի եւ պատարագեցին 'ի վերայ Գերեզմանի Ս. Աստուածածնի ('ի 6 Ապրիլի) յուրախութիւն միաբանաց և ուխտաւորաց տարւոյն, և ծանոյց զայսոսիկ ազգայնոց 'ի Կոստանդինուպոլիս։ Յոյնք զչարեալ առ այս՝ ամպարեալ գրեցին առ Կուսակալն ամբաստանութիւն զՊատրիարքէն Հայոց, եւ առաքեցին 'ի Դամասկոս զարս երիս, ընդ որս էր և Խոճաքեանն, և շրջեցին զմիտս Կուսակալին 'ի կողմն իւրեանց, և առին գիր հակառակ առաջին գրոց. և դարձ արարեալ անտի մտին Յերուսաղէմ յաւուր Ճրագալուցի Զատկին. և պահեալ ըզգիրն՝ խաղաղութեամբ կատարեցին ընդ Հայոց զհանդէս լուսաւորութեան. յորմէ կասկածէին Հայք լինել խռովութեան եւ էին յերկիւղի։ Եւ ապա ետուն ընթեռնուլ զգիրն 'ի դատարանի, որպէս և գրեալ էր նա ինքն Կուսակալն առ Թէոդորոս Պատրիարք, եւ դարձեալ խափանեցին զպատարագն Գերեզմանի Ս. Աստուածածնի, եւ բարձին զպատկեր Լուսաւորչին, և զկանթեղն 'ի տաճարին Ս. Յարութեան, և կամէին խափանել նաեւ զպատարագելն Հայոց յիւրաքերից սեղանն, բայց Հայք ընդդիմացան ընդ այն և կատարեցին։

Ի բովանդակ նամականիս Թէոդորոս Պատրիարքի, զորս գրեաց 'ի միջոցիս յայսմիկ առ գլխաւորս ազգին եւ առ Փոխանորդն իւր 'ի Կոստանդինուպոլիս, ոչ այլ ինչ պատմին, բայց եթէ վիշտք, դառնութիւն, դաւաճանութիւն, զրկանք, տուգանք սէս սէս, անտանելի նեղութիւնք, դժուարակիր և դառն աղքատութիւն, (1810. 'ի 25 Մայիսի)։